



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌԻ ԿԱԴՐՆԵՐԻ ՍԱՐԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

**N 61**

**«19» «03» 2020թ.**

**(0-255) 6-00-58**

Էլ-փոստ [saramej.lori@mta.gov.am](mailto:saramej.lori@mta.gov.am)

**ՀՀ Լոռու մարզպետ  
Պարոն Ա.Ղուկասյանին**

Հարգելի պարոն մարզպետ  
Ի պատասխան Ձեր 17.01.2020թ.-ի թիվ 01/107.3/00404-2020 գրությանը՝  
կից Ձեզ ենք ներկայացնում Սարամեջ համայնքի 20.03.2020 թվականի  
հրավիրված արտահերթ նիստի մասին տեղեկացումը, նիստի օրակարգը, նիստում  
քննարկվելիք հարցերի վերաբերյալ ընդունվելիք որոշումների նախագծերը.

Առդիր՝ 6 էջ:

**ՍԱՐԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿԱԴՐՆԵՐԻ ՍԱՐԱՄԵՋԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ**

գ.Սարամեջ (19.03.2020թ.)



Սարամեջ համայնքի ավագանու  
2020թ.-ի մարտի 20-ի արտահերթ  
նիստի օրակարգը հաստատելու մասին  
Ձեկուցող՝ Հ.Հովհաննիսյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի  
6-րդ մասով Սարամեջ համայնքի ավագանին.

**ՈՐՈՇՈՒՄ`**

Հաստատել Սարամեջ համայնքի ավագանու 2020թ.-ի մարտի 20-ի արտահերթ  
նիստի օրակարգը:

1. Սարամեջ համայնքի ավագանու 2020թ.-ի մարտի 20-ի արտահերթ նիստի  
օրակարգը հաստատելու մասին.

Ձեկուցող՝ Հ.Հովհաննիսյան

2. Սարամեջ համայնքի գիշերային լուսավորությունը ապահովելու մասին`

Ձեկուցող՝ Հ.Հովհաննիսյան

3. Սարամեջ համայնքի սեփականություն հանդիսացող 06-098-0118-0001  
ծածկագրի 16.57 հա 4-րդ կարգի արտոից առանձնացված 0.125 հա հողամասը  
փոխադրել գյուղատնտեսական նշանակության ավելի բարձրարժեք հողատեսքի,  
որպես 4-րդ կարգի

Ձեկուցող՝ Հ.Հովհաննիսյան

4. Սարամեջ համայնքի սեփականություն հանդիսացող 06098-0014-009 ծածկագրի  
տակ գտնվող հողամասը և բնակելի տունը նվիրաբերելու մասին`

Ձեկուցող. Հ.Հովհաննիսյան

5. Սարամեջ համայնքի ավագանու անդամ Աղվան Եզնակի Մկրտչյանի  
լիազորությունները վայր դնելու վերաբերյալ`

Ձեկուցող՝ Հ.Հովհաննիսյան

6. Սարամեջ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրը նշանակման մասին

Ձեկուցող՝ Հ.Հովհաննիսյան

ՀՀ Լոռու մարզի Սարամեջ համայնքի  
գիշերային լուսավորությունը ապահովելու մասին

---

/Զեկ. Հ.Հովհաննիսյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 42-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, Սարամեջ համայնքի ավագանին՝

#### **ՈՐՈՇՈՒՄ Է**

ՀՀ Լոռու մարզի Սարամեջ համայնքի գիշերային լուսավորությունը ապահովելու համար բյուջեից տրամադրել 6.3 մլն ՀՀ դրամ, որը սուբսիդավորման արդյունքում ընդհանուր կազմում է 14 մլն ՀՀ դրամ:

---

ՀՀ Լոռու մարզի Սարամեջ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք 4-րդ կարգի արոտավայրը փոխադրել գյուղատնտեսական ավելի բարձրարժեք հողատեսքի 4-րդ կարգի վարելահողի

---

/Զեկ. Հ.Հովհաննիսյան

**Ղեկավարվելով ՀՀ « Հողային օրենսգրքի» 5-րդ հոդվածի 5-րդ կետով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով , Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009 թվականի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին հավելվածի 7-րդ և 8-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 06.09.2005թ. թիվ 878-Ն որոշումով Սարամեջ համայնքի սեփականություն հանդիսացող 06-098-0118-0001 ծածկագրով 0.125 հա գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք՝ 4-րդ կարգի արոտավայրը համաձայն սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծի, փոխադրել գյուղատնտեսական նշանակության ավելի բարձրարժեք հողատեսքի՝ որպես 4-րդ կարգի վարելահող :**

ՀՀ Լոռու մարզի Սարամեջ համայնքի  
սեփականություն հանդիսացող հողամասը և  
բնակելի տունը համայնքի բնակիչներ  
Կամո Հովհաննիսյանին և Սուսաննա Եղիկյանին  
նվիրաբերելու մասին

---

/Զեկ. Հ.Հովհաննիսյան

Ղեկավարվելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի  
18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ գործող հողային օրենսգրքի 63,64 և 65  
հոդվածներով սահմանված կարգով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Սարամեջ  
համայնքի բնակիչ Կամո Հովհաննիսյանի ընտանիքի բնակարանային պայմանները  
Սարամեջ համայնքի սեփականություն հանդիսացող 06 098 0014-003 ծածկագրի  
տակ գտնվող 0.143 հա հողամասը և 207.0 քմ բնակելի տունը Կամո  
Հովհաննիսյանի ընտանիքին նվիրաբերելու վերաբերյալ՝ (կից սեփ. վկայականը):

Սարամեջ համայնքի ավագանու  
անդամի լիազորությունների  
վաղաժամկետ դադարեցման մասին

---

/Զեկ. Հ.Հովհաննիսյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով Սարամեջ համայնքի ավագանու անդամ Աղվան Մկրտչյանի լիազորությունները դադարեցնել 2019 թվականի ընթացքում ավագանու նիստերին չներկայանալու պատճառով:

Սարամեջ համայնքի ավագանու  
արտահերթ նիստի օրը որոշելու մասին

---

/Զեկ. Հ.Հովհաննիսյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի  
2-րդ մասով՝ Սարամեջ համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Սարամեջ համայնքի ավագանու արտահերթ նիստի օր նշանակել 2020 թվականի մարտի  
20-ը: